

## Տոկոսագումարների հաշվարկման կարգը

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.** ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ և ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

### ***Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը***

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{Dn}{365}}}$$

որտեղ՝

$i$  - տարեկան փաստացի տոկոսադրույք

$A$  - սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումար

$n$  - սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համար

$N$  - վարկի մարմանը (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համար

$K_n$  - սպառողի կողմից վարկի ստացման պահին և (կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝  $n$ -րդ վճարի գումար (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ)

$Dn$  - վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝  $n$ -րդ մարման օրը ներառյալ ընկած ժամանակահատված՝ արտահայտված օրերի թվով

$i$  - տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ

## **Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ**

*վարկի տրամադրման պայմաններ.*

- Վարկի գումար՝ 450.000 ՀՀ դրամ
- Անվանական տոկոսադրույք՝ 12%
- Մարման ժամկետ՝ 120 ամիս
- Տոկոսագումարի մարում՝ ամսական
- Վարկի տրամադրման միանվագ վճար՝ չի սահմանվում
- Հայտի ուսումնասիրության վճար՝ չի սահմանվում

**Վերոնշյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 12.6%**

---

---